

Մեծի պահոց կիւրակէներին գիւղի եկեղեցում ժողովրդին հոգևոր մխիթարութիւն տալու համար, քարոզիչներ նշանակուեցան Ն. Ս. Օծութեան կողմից Տ. Աշոտ եպիսկոպոս, Տ. Գարեգին վարդապետ, Տ. Ներսէս վարդապետ, և Տ. Ղևոնդ վարդապետ Մարդուկիսեան:



Տ. ԲԱՐԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ներկայ թուականի յունուարի 3-ին բժաւոր տիֆից մեռաւ մեր միաբանութեան աչքի ընկնող անդամներից մէկը՝ Սինօդի անդամ՝ Տ. Բարգէն վարդապետը:

Նա ծնուել է 1869 թ. հոկտեմբեր 10-ին Շուշի քաղաքում: Մանկութեան ուսումնի ստացել է մայրենի քաղաքում և ապա աւարտել Մ. Աթոռի Հոգևոր ձեմարանը 1895 թուին: Դեռ ևս վերջին լսարանում 1894 թ. դեկտեմբերի 17-ին նա ընդունուել էր էջմիածնի միաբանութեան շարքը: Ուսումը ձեմարանում՝ աւարտելուց յետոյ՝ 1895 թ. ձեմարանի տնտես է նշանակւում, իսկ սեպտեմբերին՝ Վաղարշապատի ծխական օրիորդաց դպրոցում կրօնուսոյց, 1896 թ. նշանակւում է Տպարանական ժողովի անդամ-գանձապահ, հրաժարուելով ձեմարանի տնտեսութեան պաշտօնից: 1897 թ. նոյեմբերի 30-ին Տ. Սուքիաս եպիսկոպոսի ձեռքով արեղայ է ձեռնադրւում, իսկ յունիսի 18-ին վարդապետական աստիճան է ստանում: Նոյն թուի նոյեմբերի 8-ին ուղարկւում է Խարկով կատարագործուելու իրաւաբանական գիտութիւնների մէջ, երեք տարի իբրև ազատ ունկնդիր յաճախելով համալսարան: Հանգուցեալ Տ. Մկրտիչ կաթողիկոսի կոնդակով 1902-ին նշանակւում է Ախալցխայի փոխանօրդ, որտեղից ապա փո-

խաղարուել է ս. Էջմիածին իբրև Սինոդի և Վանական կառավարութեան անդամ։ Սինոդում նա ստանձնում է Դատատանական բաժնի կառավարութիւնը, նա ցայց է տալիս եռանդուն մասնակցութիւն ամեն գործի մէջ, ինչպէս քննիչ 1904 թ. Շամախու թեմի գործերի, վանքի հոգերի ուղղման յանձնաժողովի, 1906 թ. վանական կարուածների բարեկարգութեան յանձնաժողովի նախագահ, նա ջերմ մասնակցութիւն է ունեցել նաև վանական ներքին կեանքի հետ կապուած այլ և այլ յանձնաժողովների մէջ, ինչպէս և Էջմիածնի տաճարի վերանորոգութեան, Հայրապետական Դիւանի (1912 յունիս 5), ծխական կանոնադրութեան և ուսումնական բարեփոխութեան յանձնաժողովներում։ Երկիցս մասնակցել է Հայրապետական ընտրութիւններին (1908, 1911) իբրև Սինոդի անդամ։ 1908 թ. հոկտեմբեր 30-ին նշանակուեց Էջմիածնի հրաւիրակութեան անդամ նորընտիր Տ. Մատթէոս կաթողիկոսին Պօլսից Պետրոգրադ ուղեկցելու, ուր և որպէս ն. Սրբութեան շքախմբի անդամ ներկայացաւ ն. Կայսերական Մեծութեան, «Արարատ» ի խմբագրութեան յանձնաժողովի նախագահ նշանակուեցաւ։ 1913 դեկտեմբեր 9-ին, որ և ապա իբր լիազօր խմբագիր շարունակեց ղեկավարել Հայրապետական ամսագրի հրատարակութեան գործը մինչև իւր մահը, 1914 թ. դեկտեմբեր 28-ին նշանակուեցաւ Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի անդամ, այդ պաշտօնի բերմամբ ևս, իբրև ընդհանուր կառավարիչ Որբանոցի, վարակուեցաւ տարաբաղդաբար բժաւոր տիֆով դեկտեմբերի 27-ին և վախճանուեցաւ յունուարի 3-ին 1916 թ., դեռ առջի գործունէութեան եռանդով լի հասակում։

Հանգուցեալը իւրովսանն ծառայել է նաև հայ գրականութեան, ոչ միայն իբրև «Արարատ» ի խմբագիր կամ աշխատակից, այլ և իբրև բանասէր, նա է հրատարակել Առաքել Դաւրիժեցու պատմութիւնը Գ. տպագրութեամբ 1896 թ., առաջին անգամ գրքով, հրատարակել է 1905 թ. Խաչատուր արեղայ Զուղայեցու պատմութիւնը, (մասամբ

տպագրած «Ազդարար»-ի մէջ), Կաթողիկոսական ընտրութիւն և կանոններ, 1908 թ., ս. էջմիածնի կալուածներ և նրանց բարեկարգութեան ծրագիրը, 1908. թարգմանել է Ա. Կրիմսկու «Մահմեդական աշխարհը և նրա ապագան», 1915 թ. «Արարատ»-ի մէջ սկսել էր հրատարակել Մանուէլ վարդապետ Կիւմիշխանեցու պատմութիւն, ԺԹ. դարու մեր պատմութեան մի յիշատակարան, որ յուսանք կը շարունակուի մինչև վերջ նոր խմբագրութեան օրով:

Մահուանից մի երկու ամիս առաջ Նորին Սրբութեան կողմից առաջարկուած էր ի հաստատութիւն Շուշույ թեմակալ, բայց դեռ չհաստատուած նոյն պաշտօնին մէջ հանգեաւ ի Տէր: Նորա կօրուստը զգալի է մանաւանդ, երբ այսքան նոսրացած են մեր միաբանութեան երիտասարդ և գործող անդամների շարքը:

Լուսաւորեսցէ Տէր զհոգի հանգուցելոյն, ամէն:

Գարեգին վարդ.

